



ԼՐԱԳԻՐ

ԲԱՆԱԲԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԲԱՆԱԲԱԿԱՆ

ԿԱՌԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ 15 ԴԵԿՏԵՄԲԵՐ

Երոստայի մէջ այս օրերս հասարակաց ուղարկութիւնը հունգարացի վրայ դարձած է: Սեր ընթերցողներուն արդէն յայտնի է որ Աւստրիոյ կայսրը հոկտ. 20ին հանած հրովարտակաւ մը քանի մը արտօնութիւններ շնորհեց հունգարացի: Այս շնորհումներն առջի բերանը մեծ ուրախութիւն պատճառեցին հունգարացի ժողովուրդը, բայց ետքը քիչ քիչ անոնց պահանջներն ընդ աւելցան: Եւ այս պատճառաւ տեղ տեղ խռովութիւն ծագեցաւ, եւ մասը գրգռութիւնն ալ օր քան զօր սաստկանալու վրայ է:

Աւստրիոյ կառավարութիւնը թեպէտ միտք չունի արդէն առաւել ետեւնելու, բայց հունգարացեաց պահանջմունքներուն ալ զիջանիլ յանձն չառնել: Կառավարութեան պաշտօնակներէն ոմանք կառավարիկն երկիրը հանդարտեցնելու համար պաշարման վեճակի մէջ դնելու. ոմանք ալ դէմ կը կենան այս բանին՝ վստահելով որ գրգռութիւնն աւելի կը սաստկանայ ու գէշ հետեւանքներ կը ծագի:

Հունգարացի մէջ ալ կարծիքներն համաձայն չեն: Ժողովուրդը ինչպէս վերը ըսինք՝ 1848 ին սահմանադրութեան վերահաստատիլը կը պահանջէ, բայց ազնուականները վերջին հրովարտիկն սահմանէն դուրս չենելու խնդիր կընեն կառավարութեան: Ասանկով Աւստրիոյ կառավարութիւնը տարտամ վեճակի մը մէջ մնացած է, եւ որ կողմը բռնկելը յայտնի չէ:

Առաջի թէ Աւստրիոյ գերմանական նահանգներուն մէջ ալ մեծ գրգռութիւն ծագած է հունգարացի տարրեր կերպով կառավարվելուն համար: Մէքլեմպուրկի մեծ զքսութեան մէջ սահմանադրական կառավարութիւն հաստատուելու ջանք կայ:

Գաղղիոյ մէջ ալ Ա. Նաթիոնի կայսեր շնորհած մէկ քանի սահմանադրական ազատութիւնները լրագրաց եւ ժողովուրդեան ուշք գրաւած են: Բնականաբար կը կարծելի որ այն շնորհումները նախաշաղկ են ուրիշ աւելի կարեւոր շնորհումներուն, որոց առաջինն ուսմանն զլնաւորը լրագրաց ազատու-

թիւնն է: Կայսեր կառավարութիւնը այս վերջին խնդրոյն վրայ ալ հասարակաց ակնկալութիւնը լեցնելու յօժարամտութիւնը յայտնեց՝ ապագրական օրինաց վրայ շնորհերական մը հանելով ներքին գործոց պաշտօնեայ Բեռլինի կոմսին ստորագրութեամբ: Յիշեալ շնորհերականին մէջ ըսված է թէ երբոր Գաղղիացի լրագրագետները խոհեմութեան ու անկողնասիրութեան զգացումներով վաւիճին, իրենց ազատութիւնը չափաւորող այժմեան օրէնքներն անօգուտ կըլլան, եւ վերջապէս յայտարարութիւն եղած է թէ այնպիսի խնդիրներու մէջ որ տէրութեան եւ ազգին օգտակար են, լրագրիկները կատարեալ ազատութիւն ունին գրելու, բայց կառավարութեան դէմ թշնամութիւն ընելու զանիկա կործանելու աշխատիլ ներել չեն երբեք: Բնեւ ի որ Գաղղիոյ մէջ ապագրական ազատութիւնը չափաւորող օրէնքները վերջն պարագային մէջ միայն գործադրելի պիտի ըլլան:

Այս շնորհերականը հրատարակելէն երկու օր ետքը Մեքլեմպուրկի մէջ հրովարտակ մը տեսնուեցաւ, որով Ա. Նաթիոնի կայսրը մինչեւ հիմա լրագրիկներուն տրված ազգարարութիւնները ներեց: Ասանկով, այն լրագրիկները որ մէկ կամ երկու ազգարարութիւն առած ըլլալով դարարման վտանգի մէջ էին՝ ազատեցան:

Իտալիայի գործերը նոյն վեճակին մէջ են:

Այլեթայն ուստի ժողովութիւնը կը շարունակէ բաւական անստիճութեամբ, եւ բերդին թնդանօթներն ալ նոյն սաստկութեամբ կը պատասխանեն:

Առաջի թէ Գաղղիոյ, Անգլիոյ եւ Ռուսիոյ կառավարութիւններն յորդորանաց զիրեք գրեթե նոյն ձեով խոստանալով որ անօգուտ տեղը չերկրն յունեն իւր գիմադրութիւնը:

Գաղղիոյ կառավարութիւնը կը շարունակէ Այլեթայնի դէմ ծովու կողմանէ թշնամական գործողութիւններն արդիւրելու, եւ այս նպատակաւ Պարպիէտը Թիւան ծովապետին նաւաւորուրդ աւելի զօրացուց՝ երկու նոր պատերազմական նաւ խրկելով անոր: Բայց միւս կողմանէ Ա. Նաթիոնի կայսրը չդադրիլ Պրանչիսկոս Բ. Թագաւորն յորդորելի որ անօգուտ տեղը դէմ չկենայ եւ Այլեթայնի մեկնի:

Թուրքիէն դեկտ. 2/14 թուով լուր կուտան թէ Այլեթայնի դէմ թշնամութիւնները երեք օրուան համար դադրել են: Ասկէ կը կարծելի թէ վերջիշաղկ երեք մեծ տէրութեանց յոր-

դորանքներն ապարդիւն չեն մնացած եւ վերջապէս Պրանչիսկոս Բ. Այլեթայնի մեկնելու պիտի համազօր:

Սարտեմիայի Ա. Ալեքթոր Լամանուէլ Թագաւորը (լատ.) դեկտ. 1 ին Սիկիլիայի Բալէրմո մայրաքաղաքը հասաւ եւ անպատմելի ցնծութեամբ ընդունուեցաւ: Ժողովուրդը կուգէր Թագաւորին կողքին ձիերն արձակելու քաշելով պտոցներէ փողոցներուն մէջ:

Սիկիլիայի ամեն կողմերէն անթիւ բաղմունքիւն Բալէրմո դիմեր էին, անանկ որ յիշեալ քաղաքին մէջ 400,000 չափ մարդ կար:

Ա. Ալեքթոր Լամանուէլին Սիկիլիա դադած ժամանակը՝ Նաթիոնի առջեւ ըստպատող անգղիական պատերազմի նաւերը թնդանօթ արձակելով զենքը ողջունեցին: Այս բանը մեծ տպաւորութիւն ըրաւ Նաթիոնի ժողովուրդեան վրայ:

Թագաւորը վեց օր կեցաւ Բալէրմո ուր քաղաքական ու զինուորական կարեւոր կարգադրութիւններ ըրաւ, եւ լատ. դեկտ. 7 ին Նաթիոն վերադարձաւ:

Հռոմ տէրութեանն բաժնրված Ռուսիա դաւառին մէջ բաղմունքի վանքեր կային որոնք 5000 էնուելի կործանուող կը պարունակէին զանազան արդէ, եւ 200 միլիոն Ֆրանքներէն հարուստութիւն ունէին: Յիշեալ դաւառին այժմեան կառավարութիւնը այս կործանական միաբանութիւնները վերցուց բաց ի մէկ քանիէն՝ որոնք ժողովուրդեան սիրելի եւ յարգեցեալ էին իրենց բարեգործութիւններովը, եւ այս վերջիններուն յատուկ թոշակ եւ ապրուստ կապեց: Անքերն ալ գրաւելով՝ որը հիւանդանոց եւ որը դպրոց ըրաւ, եւ անոնց հարստութիւնը հասարակաց կրթութեան եւ բարեգործական ձեռնարկութեանց յատկացուց:

Անգլիոյ կառավարութիւնը այս օրերս Նիդրլանդարի Մայլթայի եւ Քորֆուի ամրութիւնները կը բաղմապատկէ նոր մարտիկներ շինել առաւել եւ հին թնդանօթներուն տեղը Լըմսթրօնի ահալին թնդանօթները զետեղելով:

Այս պատրաստութիւնները որ թերեւս լոկնախաղաղութեան մը համար են՝ զանազան կարծիքներու առիթ եղած են եւրոպական լրագրիկներուն:

Փարիզէն դեկտ. 2/14 թուով լուր կուտան թէ Գաղղիացեաց կայսրուհին Փարիզ հասել է քաջառողջ վեճակի մէջ:

Անգլիայէն դառնալով ժամանակը Թագաւորուհին հետ ալ տեսակցել է յատ-

կապէս այցելու թեան երթալով Ռեյնտաօրի պալատը, ուր խիստ փառաւոր եւ սիրալիր ընդունելութիւն մը եղեր է իրեն:

Գաղղիական Օքսի: Դաւանաւ լրագրիկն նոյեմբեր 3 թուոյն մէջ Բեռլինի վրէժը դրված նամակ մը կայ հրատարակած, որ կը ծանուցանէ թէ Ռուստտանի սարուկ զեղացիներուն (մուծիք) ազատութեան հրովարտալը կայսրը ստորագրել է:

Հնգաստանէն եկած լուրերուն համաձայն, Անգլիոյ կառավարութեան հին հաստատած եկամտից տուրքը մեծ տրոհահոթիւն պատճառաւ է հնգիկներուն, եւ կը վախճվի որ զէնքով ընդգրկուած թիւն ընելու կենեն:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Արաիկ օրը տէրութեան նախարարները ժողով ըրին Բ. Դուռընդ նախագահութեամբ բարձրագատիւ Սոմ Լայարքոսին: Յիշեալ ժողովը մի միայն դանձալին խնդիրներու զբաղեցաւ:

Մայրաքաղաքին Դաւանաւ լրագրիկը պաշտօնական կերպով կը ծանուցանէ թէ կայսերական կառավարութիւնը զեւ ուրոշում մը ըրած է՝ Հաղէ Թագաւորը ըսված թուղթերուն վրայ, որոց վճարման պայմանաժամը մօտեցած է:

Այսերական կառավարութիւնը քիչ օրէն այս գործին պիտի զբաղի, եւ ընելը որոշում մը իսկոյն պիտի հրատարակվի:

Փարիզէն եկած լուրերն համաձայն կը ծանուցանեն թէ Օսմանեան փոխառութեան բաժնիները գնելու մեծ փոյթ կայ հոն: Արկաթուղեաց ընդհանուր անտուկին գործակալութեան զբաղեցանքներուն առջեւ ստորագրողաց մեծ բաղմունքիւն զիջված է:

Ասկէ կը յուսացվի որ միայն Փարիզ մէջ եղած ստորագրութիւնները բաւական պիտի ըլլան փոխառութեան գումարը լեցնելու:

Այս օրերս կայսերական կառավարութեան եւ մայրաքաղաքին գաղղիական ու անգլիական դեսպաններուն մէջ յաճախ բանակցութիւններ կըլլան:

Մայրաքաղաքին Դաւանաւ լրագրիկն խօսքին նայելով՝ այս բանակցութիւնները յիշեալ երկու տէրութեանց Տաճկաստանի հետ ունեցած առեւտրական դաշնադրութիւններուն մէջ կարեւոր փոփոխութիւններ մտցնելու վրայ օրէ:

Առաջի թէ, առաջարկված փոփո-

խոնթիւններուն նպատակն է Տաճկաստանէն դուրս ելած ներքին բերքերուն մաքուր թեթեւցընել, եւ դուրսէն մտած արտաքին բերքերուն մէկ քանիւն մաքուր աւելցընել:

Բարձրագոյն Մեծ Եպարքոս Գրգորը Մէհմէտ փաշան ամեն օր տէրութեան դանդաղ պաշտօնարանները երթալով, ամեն բան անձամբ կը քննէ, եւ անոնց բարեկարգութեան ու կատարելութեանը հոգ կը տանի:

Ընդհալ երեքշաբթի Գանձուց պաշտօնատունը զնաց, եւ բոլոր գլխաւոր պաշտօնատարներն ու գործակալներն իր առջեւ բերել տալով՝ փութաձեւութեան հաւատարմութեան եւ անձնանկրութեան վերաբերեալ պատուէրներ տուաւ անոնց:

Ընդշաբթի օրը Լուսարական գործոց պաշտօնատունը զնաց բարձրագոյն Մեծ փաշային եւ վսեմափայլ Իտհէմ փաշային հետ՝ անտառական (անտառաց մշակութեան եւ մատակարարութեան) դպրոցին աշակերտները քննելու համար: Այս քննութիւնը գաղղիներէն լեղուով եղաւ:

Յիշեալ դպրոցին մէջ կրթութիւն տալու ընդհանուր աշակերտ իր աստիճանին եւ կարողութեանը համեմատ վկայական մը ստանալով՝ կայսերական տէրութեան մէջ հաստատուելու անտառաց վերատեսչութեան պաշտօնատանը անդամ պիտի ըլլան:

Այս օրը նաեւ տեսչութեան պաշտօնատունը զնաց եւ հիւանդանոցն ու բանտը մանրամասնաբար աչքէ անցունելով՝ բանտարկելոց վեճակը բարուքելու եւ խառն իրական ու անկարգ կերպով մարդիկ բանտը չեցընելու տընտրելութիւններ ըրաւ: Ասկէջ դատ՝ Բեյքէ եւ ապրելու միջոց չունեցող բանտարկեալներն իրենց երկիրը խրկելու հրաման ըրաւ:

Նմանապէս պարտքի համար բանտարկեալ բազմաթիւ աղքատներու ազատութիւն տուաւ: Սնացեալ բանտարկելոց համար ալ յանձնագործ մը սահմանեց որ ամեն մէկուն վրայ քննութիւն ընելով տեղեկագիր մը շննէ ու՝ Նորին բարձրութեան ներկայացընէ:

Բարձրագոյն Մեծ Եպարքոս Գրգորը Մէհմէտ փաշան անցեալները Տէրութեան Բուժիչի գաւառներուն ըրած այցելութեանը վրայ տեղեկագիր մը մատոյց օգոստոսի Խնքնակալին: Այս տեղեկագրին մէջ՝ Նորին բարձրութիւնը իր ըրած այցելութեան պատճառներն ու պարագաները յիշելէ ետեւ, համառօտ՝ բայց ճիշդ եւ անաչառ կերպով կը նշկարագրէ Բուժիչի գաւառներուն ճշմարիտ վիճակը, եւ գտնելով թերութիւններն ու անկարգութիւնները վերցընելու համար արդէն իր ըրած բարեկարգութիւններն ու հետզհետէ ըլլալիք օրինադրութիւնները կը ծանուցանէ:

Եհաւասիկ յիշեալ տեղեկագրին գլխաւոր կէտերը:

“Ահապատ Տէր:

“Ձեր վեհափառութիւնն իր ամեն կարգի հպատակաց բարօրութեան ու երջանկութեանը համար ունեցած անդուլ խնամքը՝ Բուժիչի քրիստոնեայ ժողովրդոց անուշովը յառաջ բերված գանգատներուն վրայ քննութիւն մը ընելու, եւ Իւր եւրոպական սեփականութեանց մէկ քանի զաւառներուն կառավարութիւնը աչքէ անցունելու կորուստը պաշտօնը ինծի յանձնելու էր

“Ձեր վեհափառութեան ինծի տուած հրամաններուն լաւ խելամուտ ըլլալով, եւ ճշմարտութիւնը հասկնալու եւ ձեր հպատակները թէ որ արդար բոլորներն ունին՝ անոնց իրաւունք ընելու ամենամեծ կարեւորութիւնը ձանձնալով, ամեն փոյթ եւ ջանք ի գործ դրի այս նպատակին հասնելու համար:

Ամեն գացած տեղերս՝ ինծի կանոն բռնեցի՝ անխտիր ամեն բնակիչներն առջեւ կոչելու ու զերենը յորդորելու որ ինչ որ ունին նէ ըսելիք՝ ինծի ըսեն, վստահութիւն տալով Ձեր վեհափառութեան օգոստոսի անուշովը՝ որ առանց երկիւղի եւ համարձակ ճշմարտութիւնը յայտնելու

“Ձեր վեհափառութիւնը պիտի տեսնէ եղած քննութիւններուն ատեն նազուրթիւններէն եւ ես ալ ամենահաւատարիմ կերպով կը հաստատում որ տաճկական մոլեռանդութեան կողմանէ քրիստոնէից դէմ կազմուած հարձակումը կարճեցեալ դրութեան եւ ոչ մէկ նշանք գտայ. սպանութիւնները, կուսապղծութիւնները, կեղեքումները՝ որոց ցուցակը մինչեւ բարեկամ եւ գաղնակից տէրութեանց արքունիքը հասած էր, Նիշի մէջ կազմած արտաքին կարգի կառնի ատենանիս խնդրանքաւոր քննութիւններուն առջեւ գրեթէ բոլորովին անյայտ եղան: Ամեն մէկ իրողութիւն յատուկ քննութեան նիւթ եղաւ. բնաւ մէկ օրինաւոր միջոց մը չմտցընեցաւ:

“Բնէ չէ որ բնաւ յանցանք մը կամ եղեռնագործութիւն մը չըստայ զբաւելու կամ պատժելու: Այս վեհափառ Տէր, մարդկային բնութիւնը չձանձցած եւ ծաղոնել պահանջուող մը ըրած կըլլանք թէ որ ուրանանք այնպիսի չարագործութեանց՝ զոյութիւնը՝ որոց ձեռքէն աշխարհի ամենէն քաղաքակրթեալ կառավարութիւններն ալ դեռ չեն կրցած ազատել: Իմ հաստատելու զգածս եւ ըրած քննութիւններէս գտածս սա է թէ բոլորովին սխալ է Ձեր քրիստոնեայ հպատակներուն դէմ իրենց տաճիկ քաղաքակցացը կողմանէ դիմումը ի գործ դրված ամենախորը հալածանքի կարծիքը: Իբրեւ մարդկային ընկերութիւն՝ ամեն մէկ հասարակութիւն իր եղեռնադորձներու բաժինը կը մատակարարէ, որոնց դէմ օրէնքը կը խտտանայ: Իսկ այն վերոյիշեալ ցանկին մէջ պարունակեալները՝ այն անձանց մտքին մէջ միայն գոյութիւն ունին, որոնք մեզ վատաշարաւել կուզեն Տէրութեանց առջեւ:

“Նիշի մէջ երկարատեւ պարտք սեպեցի, որպէս զի ժամանակ ունենալայս ըսածիս՝ ճշմարտութիւնը լաւ ստուգելու, եւ ուղիղ գաղափար մը ունենալու այն պիտոյններուն վրայ՝ որ երկիրն ընկալաց բարօրութեանն ու յառաջադիմութեանը հարկաւոր են:

“Իմ պաշտօնիս այս մասը հաւատարմութեամբ պատմելէս ետեւ, թողութիւն կը խնդրեմ Ձեր կայսերական վեհափառութեանէն յայտնելու նաեւ պարտած դաւառներու կառավարութեանը վրայ ժողոված տեղեկութիւնները, ըրած առժամանակեայ տնօրէնութիւններս, եւ այն կառավարութեան մէկ քանի ճիւղերուն արագ եւ հիմնական բարեկարգութիւնները: Տասնորդական տուրքերուն (էօլիւ) վարձակալութեան

(իւթիլլաւ) կերպը, տեսչութեան զինւորաց կազմութիւնը եւ ճամբայներուն վեճակը ամեն կարգէ եւ կրօնքէ ելող հըպատակաց արդար իրաւունք կուտան գանգատելու: Պատերն արդարութեամբ տեսնելու համար հորիւստը եղած ապահովութիւնները տուող քանի մը եղեռնադատ ատենաներ կազմուելը՝ երկրին ըզձիցը եւ Ձեր կայսերական վեհափառութեան հայրական բաղձանացը պատասխանելիք բարեկարգութիւններէն մէկն է: Պարտաւան տուրքերուն բաժանումը եւ անուղղակի հարկաց հաւաքումը հաստատող կանոնադրութիւններն ալ նմանապէս բարեկարգութեան պէտք ունին:

“Ար համարձակիմ Ձեր կայսերական վեհափառութեան աթոռին առջեւ դնելու այն առժամանակեայ տնօրէնութիւնները՝ որ պարտաւոր դաւառներուն մէջ ըրի, եւ չգացած տեղերուն կառավարիչներուն ալ խրկելիք:

“Գտած վերոյիշեալ անկարգութիւններուն մէջ պարտք կը համարեմ նշանակել նաեւ սա մէկը՝ որ նոյնպէս արագ եւ ազգու գարման մը կուզէ: Խօսքս Բուժիչի բարձրաստիճան Յոյնեկեղեցականներուն մէկ քանիւն դայթակական ընթացքին վրայ է: Ար խոստովանիմ որ անոնց շատերը յարգաւոր ժամերն են, այսու ամենայնիւ չեմ կրնար ժխտել որ մէջերնէն ոմանք իրենց հոգեւոր պաշտօնին պարտաւորութիւնները չեն ձանձար, եւ իրենց կարգին ու աստիճանին ամեն մասամբ անվայել անկարգութիւններու անձնատուր կըլլան: Քիչ օրէն Ձեր կայսերական վեհափառութեան պիտի ներկայացընեմ Ձեր վեհափառութեան հրամանաւոր Յունաց պատրիարքարանին մէջ հաստատված առժամանակեայ յանձնագործին եպիսկոպոսաց ընտրելութեան պայմաններուն վերայ շինած կանոնադրութիւնը: Ար յուսացվի որ այն կանոնադրութեան հաւատարիմ եւ ճիշդ գործադրութիւնը վերջ կուտայ այս անկարգ վեճակին՝ որ եկեղեցականաց համարաւոյն վնաս կը բերէ եւ միանգամայն քրիստոնեայները կը հարստահարէ:

“Ձեր կայսերական վեհափառութեան կառավարութիւնը՝ Ձեր հրամանին համեմատ ամենայն փութով զբաղած է վերոյիշեալ ամեն մէկ կէտերուն վրայ օրէնքներ շննելու, որոնք քիչ ժամանակէն Ձեր կայսերական վեհափառութեան բարձր որոշմանը պիտի ներկայացընեն:

“Ահապատ Տէր, Նախախաւովութիւնը Ձեր կայսերական վեհափառութեան յանձնած է Ձեր մեծ Տէրութիւնը վերանորոգելու փառաւոր բայց դժուարին պաշտօնը: Այս ճամբուն մէջ անոր ընդ տուած յառաջադիմութիւնիդ խիստ մեծ է: Ամեն մարդ կը ձանձնայ թէ ինչ որ Ձեր խնամքը ներքեւ մեր մէջը տաքն տարուան մէջ եղաւ, ուրիշ տէրութեանց մէջ խիստ շատ ժամանակի կարօտ էր եւ ծանրութեւ շփութութիւններու պատճառ կըլլար: Տաճկաստան Ձեր կայսերական վեհափառութեան կը պարտաւորի այն բարեբարութիւնը՝ որով իր ընկեր վեճակափոխութեան ճամբուն մեծ մասը առանց յուզման եւ առանց բուռն վրդովման՝ քաղցը անցաւ:

“Ըրդարեւ չենք կրնար պարծիլ իրեն կատարելութեան հաւած: Մեր

փարչութիւնը՝ ինչպէս որ պատիւ ունեցայ վերը ըսելու, տակաւին թերութիւններ ունի. բայց ներկան լաւ դատելու, այսինքն արդէն եղած յառաջադիմութիւնը լաւ հասկնալու համար՝ անցեալը պէտք է յիշենք: Այն ժամանակի իրին խնդիրները եւ տարբերութեան մեծութիւնը աչքի կը զարնէ: Ձեր կայսերական վեհափառութեան վեհ սիրտը պէտք է մխթարէ՝ քանի որ մտածէ թէ այս յառաջադիմութիւնը իւր թագաւորութեան եւ իր կամեցողութեան բացարձակ արդիւնքն է:

“Այս քանի մը դիտողութիւններն աւելցընելուս նպատակը՝ չէ թէ Ձեր կառավարութեան խրատ տալէ որ արդէն եղածովը քօհ ըլլայ եւ ուր է նէ հօգիւնայ: Քաւ լիցի որ այսպիսի էտք մը ունենամ: Բնդհակառակն կը հաւատամ որ արդէն եղած բարեկարգութիւնները Ձեր վեհափառութեան պաշտօնայնէրուն նախանք պէտք է շարժեն ուրիշ բարեկարգութիւններ ընելու համար, որպէս զի Ձեր հպատակներն այն բարօրութեան ու ապահովութեան աստիճանին հասնին որուն Ձեր վեհափառութիւնը անդադար կը փափաքի:

“Պատիւ կը համարեմ ինծի ըլլալ ամենախորին ակնածութեամբ եւ հաւաքողութեամբ

Ձերում կայսերական վեհափառութեան եւայն, եւայն . . .

Կայսերական հրամանաւ՝ Մուքթաթ Եղուսթ Քէրամի պէյը Լեւանտու Մարօնիներուն գայմազամ անուանեցաւ փոխանակ Իմիր Պէշեր Եհմէտին:

Դարձեալ կայսերական հրամանաւ՝ Մերկիններու գլխանին գլուխ Իմին պէյը գանձուց պաշտօնատան նկատից դիւանին համարակալ (Սուլթանէպէ) անուանեցաւ փոխանակ Թէպէի Էֆենտին որ գանձուց պաշտօնեայ եղած է:

ԱԶԳԱՅԻՆ

Ա. Փրիչի Հիւանդանոցին յարգի հոգաբարձուներն անցեալ կիրակի օրը յատուկ նամակներով աղոյայն երեւելի թիւիները հրաւիրած էին, որ յիշեալ աղոյայն հաստատութեան մէջ պատրաստուալ հիւանդաց խնամածութեանը մասին պէտք եղած բարեկարգութեանց միջոցներուն վրայ խորհրդակցելով՝ արժանի եղած տնօրէնութիւններն առաջարկելու համար, որպէս զի հոգաբարձուներն ալ հիւանդանոցին այն ամենակարեւոր մասը նոյն տնօրէնութեանց համեմատ կարգադրեն:

Սակայն խօրասանման ձեռնարկաւ Պետրոս Եփրայիմ դժբաղդ եւ անդետալից մահուան պատճառաւ նոյն օրը այս գործին կատարվիլ անկարելի ըլլալով, յիշեալ մեծարգոյ թիւիները կը հրաւիրվին լրագրոյս միջոցաւ ի դիմաց յորդի հոգաբարձուաց՝ բարի հաճիլ յառաջիկայ շաբաթ օրը որ է դեկտեմբեր 17 ժամը վիցին Ա. Փրիչի հիւանդանոցը երթալու, եւ իրենց աղգափութեանն ու հմտութեանն սպասված վերոյիշեալ կարեւոր տնօրէնութիւններն ընելու:

